Ս. ՇՏԻԿՅԱՆ

ԱՐՍԵՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(Մահվան 100-ամյակի առթիվ)

... Կենսագրությունը, Մխիթարյան միաբանության անդամների մեծագույն մասի նման համառոտ է այնքան, որ կարելի է մեկ-երկու նախադասությամբ անգամ վերարտադրել։ Ծնվել է Պոլսում, 1790 թվականին, 1801թ, մեկնել է Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ ուսանելու, և ապա՝ ընդմիշտ որդեգրվել է այդ միաբանությանը։ Այլևայլ առիթներով ուղևորվել է Փարիզ, Հռոմ, Պետերբուրգ, երկար ժամանակ հանգրվանել է Պոլսում, որպես Տյուզյանների տնային դաստիարակ, ապա եղել է ուսուցիչ Վենետիկի Մուրատյան Վարժարանում։ Վախճանվել է 1866 թվականի դեկտեմբերին Վենետիկում և թաղվել Ս. Ղազար կղզում. ահա բոլորը։ Կենսագրության ուշագրավ մի կետը թերևս այն է, որ Բագրատունին փոքր հասակում զրկվեց մորից և հույն ստնտու ունեցավ։ Սրա հետևանքով նա հունարենի քաջամարտիկ էր «դեռ երեխայական տիոց մեջ», քաջամարտիկ այնքան, որ Մխիթարյանները սկզբում դժվարանում էին նրան իրենց մոտ ուսումնարան ընդունել, որովհետև պատանին հունարենը հայերենից լավ գիտեր, իսկ տասնութ տարեկան հասակում ազատ օգտվում էր նաև իտալերեն, լատիներեն, ֆրանսերեն լեզուներից։ Հետագայում ավելացան անգլերենը, գերմաներենը, թուրքերենը, պարսկերենը, արաբերենը, եբրայերենը։ Լեզվագիտական այսպիսի մեծ պաշարը հենց սկզբից իսկ կողմնորոշեց Բագրատունուն դեպի հայագիտությունն ու բանասիրությունը, իսկ Միաբանության ներսում ստացած կրթությունը վերջնականապես ձևավորեց նրան որպես թարգմանիչ, քերական, որպես բանաստեղծ։

Գալով Բագրատունու գրական ժառանգությանը, ապա վերջինս շատ է գրել նույնիսկ Մխիթարյան միաբանության մասշտաբով։ Նրա ինքնուրույն և թարգմանական երկասիրությունների թիվը անց է երեսուն մեծադիր հատորներից, չհաշված Միաբանության ամսագրում՝ «Բազմավեպում» սփռված հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք նույնպես պատկառելի քանակ են կազմում, չհաշված գրեթե տարին մեկ հրատարակվող դասականների (Եղիշե, Կողբացի, Նարեկացի և այլն) գործերի հատորիկները, Բագրատունու պատրաստած տեքստաբանական ապարատով, գրաբար հմուտ առաջաբանով ու մանրակրկիտ ծանոթագրություններով։ Սակայն նրա հայագիտական աշխատությունների թագն ու պսակը հանդիսացավ «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» կապիտալ աշխատությունը (Վենետիկ, 1852 թ., 744 էջ), որը «քառասուն տարիներու անխոնջ ճգանց» արդյունք է, և որի դերն

ու նշանակությունը դժվար է վերագնահատել։ Բանն այն է, որ զանազան ժամանակներում հայերեն (գրաբար) սովորած և այն մինչև վերջ չյուրացրած այլևայլ եվրոպացիներ (Հակոբ Վիլլոտ, Պողոս Պիրոմալի, Կղեմես Գալանոս և այլն), լատինաբանություններով խճողել, աղավաղել էին լեզուն այնպես, որ այն խստիվ կորցրել էր իր նախկին «բնական կերպարանքը»։ Եվ Միքայել Չամչանի, Գաբրիել Ավետիքյանի, Եղիա Թովմաճանի «Ոսկեղենիկ» գրաբարով կատարված թարգմանություններն ու ինքնուրույն արձակ ու չափածո ստեղծագործությունները պահանջվեցին գրաբարը մաքրելու պայքարն սկսելու, լեզուն իր նախկին իրավունքների մեջ վերականգնել փորձելու համար։ Բագրատունուն վիճակվեց այդ պայքարը մինչև վերջ տանելու ծանր պատիվը, և դասական գրաբարի բոլոր մեծ ու փոքր օրենքներն ու օրինաչափությունները հայտնաբերելու ու գրով ամրապնդելու դժվարին աշխատանքը, մի աշխատանք, որը նա գլուխ է բերել հիացնող հմտությամբ։

Այնուհետև իրար հաջորդած նշանավոր թարգմանությունները (Վիրգիլիոս «Մշակականք», Վենետիկ, 1847 թ., Որատիոս Ֆլակկոս «Արուեստ քերթողութեան», անդ, 1848թ., Միլտոն «Կորուստ Դրախտին», անդ, 1861 թ., Ցիցերոն «Ճառք», Դեմոսթենես «Յաղագս Պսակին», Սոֆոկլես «Իդիպոս թագավոր», «Անտիգոնէ», «Էլեկտրա», Ռասին «Բրիտանիկ», «Գողոթիա», «Միհրդատ», Վոլտեր «Ալզիրա», «Սերովբէ», անդ, 1869 թ., Հուլիոս Կեսար «Յիշատակարան գաղղիական պատերազմին», անդ, 1874 թ. և այլն) մեկընդմիշտ հռչակում են Բագրատունուն որպես անզուգական թարգմանչի։ «Սքանչելի ճաշակը, բնագրի բացարձակ հավատարմությունը, թարգմանության կատարյալ ճշտությունը այնպես են մրցում միմյանց հետ, որ կարելի է ասել, թե նա իր ճոխությամբ գերազանցում է հույն բնագիրը», - «Իլիականի» թարգմանության կապակցությամբ նշում է Աճառյանը։ Իսկ այսպիսի և էլ ավելի ուժեղ դրվատական կարծիքներ կարելի է շատ բերել։

Հիշյալ և ուրիշ՝ վերևում չնշված չափածո թարգմանություններով Բագրատունին մի ուրիշ խոշոր նորություն բերեց հայրենի պոեզիայի և հատկապես տաղաչափության բնագավառը։ Մանրակրկիտ կերպով քննելով մեր հին և միջնադարյան պոեզիան իր բոլոր դրսևորումների մեջ, նա աստիճանաբար հանգեց այն եզրակացությանը, որ հանգավոր և չափավոր ոտանավորը ներմուծվել է հայկական իրականության մեջ հետին դարերում, գերազանցապես արաբական տիրապետության ժամանակաշրջանում։ Նշանակում է՝ մինչ այդ հայերն ունեցել են իրենց ինքնուրույն սեփական պոետիկան (բանաստեղծական չափը), որը, սակայն կորել է։ Պրպտումները շուտով տվեցին իրենց արգասավոր արդյունքը։ Ջանադիր աշխատանքից հետո

Բագրատունին կարողացավ հայտնաբերել բուն հայկական տաղաչափությունը (ինչպես անվանում էր ինքը՝ հայոց չափը), այդ չափով էլ թարգմանեց վերևում նշված գործերի մեծ մասը, իսկ Ովրատիոսի «Արվեստ քերթողութեանի» առաջաբանում ընդարձակորեն տվեց հայկական չափի պատմությունն ու գիտական տեսությունը։ Վիթխարի նորարարական մի աշխատանք է սա, որ ինքն արդեն խոսում է իր մասին։

Այս բոլորը, սակայն, ուշագրավ երևույթներ լինելով հանդերձ, մի տեսակ նախապատրաստություններ էին գրական այն մեծարժեք գործի ստեղծման համար, որը պետք է հրապարակ գար 1858 թվականին Վենետիկում, «Հայկ Դիւցազն» անվամբ, և իր մեջ խտացրած ձևով ամփոփեր մի ամբողջ գրական ուղղության բնորոշ առանձնահատկությունները։

Բանաստեղծություններ Բագրատունին սկսել է գրել դեռ քսանամյա հասակից և գրել է գրեթե մինչև կյանքի վերջը։ Նրա չափածո ստեղծագործությունների մի զգալի մասը, որոնք զետեղված են «Տաղք Մխիթարեան վարդապետաց» եռահատոր ժողովածվի առաջին հատորում (Վենետիկ, 1852 թ.), հենց սկզբից իսկ արժանացան ժամանակակիցների ուշադրությանը, իսկ նրանցից լավագույնները՝ «Եղերերգ սոխակին», «Գանգատ Պառնասեայ», «Դատաստան Ապողոնի» և այլն, մի քանի անգամ վերահրատարակվելու բախտին արժանացան։ Մենք գիտենք, որ Բագրատունին հոգևոր սնունդ էր քաղել եվրոպական կլասիցիստ հեղինակների գործերից, ուստի զարմանալի չպետք է թվա, որ իր բանաստեղծություններով ու պոեմներով նա ներբերեր, իսկ որոշ դեպքերում ավելի ամրապնդեր գրական այդ ուղղությունը մեզ մոտ։ Այս էր, ի դեպ, այն պատճառներից մեկը, որն արագորեն անուն և գրական հռչակ բերեց հեղինակին։ Եվ «Հայկ Դիւցազն»-ը իրենով վերջնականապես ամրապնդեց հայկական կլասիցիզմի դիրքերը, նրան ներկայացնելով որպես լիակատար կերպով ձևավորված ու ամբողջացված ուղղություն։

«Հայկ Դիւցազն»-ը կազմված է 20 գլխից, ի դեպ այնքան, ինչքան էր Հոմերոսի «Իլիականը» և պարունակում է 22,210 տող՝ գրված հայկական չափով։ Սյուժեն Հայկի և Բելի՝ Խորենացու ավանդած հայտնի ավանդությունն է, սակայն հեղինակը կատարել է բազմաթիվ հավելումներ ու լրացումներ։ Այսպես, օրինակ, ավելացված է Վստամի սյուժեն, որը Հայաստանի տեղական բնիկներից էր և դեմ էր Բելի դեմ պատերազմելուն, թեև, ի վերջո, հարում է Հայկին։ Ավելացված է Հայկի աղջիկ Հայկանուշը, որը հոր վիրավորվելուց հետո հագնում է նրա զենքերը, նետվում է կռիվ և թշնամիները, կարծելով, որ գործ ունեն Հայկի հետ, խուճապահար փախչում են։ Միանգամայն նոր են նահապետ Նոյի և Բյուրասպի կերպարները, որոնցից առաջինը հնարավոր ամեն ձևերով օգնում է Հայկին, մյուսը՝ Բելին ու նրա կողմնակիցներին։ Վերջապես, ըստ

Բագրատունու, Հայկն ու Բելը իրար հանդիպում ու գուպարում են հինգից-վեց անգամ և միայն վերջին կռվում է Հայկը կարողանում հաղթել Բելին, մինչդեռ ավանդությունը սովորեցնում է, որ նրանք հանդիպել են մեկ անգամ միայն և այլն: Այս և այլ հավելումները, որոնցից էլի կարելի է նշել, չեն արված ինքնանպատակ ձևով և առանց որևէ ներքին տրամաբանության: Բագրատունին այդ ամենը խելամտորեն օգտագործել է առաջատար սյուժեի (Բելի գալուստը Հայաստան, նրա կռիվը Հայկի հետ և սպանվելը) էլ ավելի հարստացման, հետևաբար և հիմնական կերպարների (Հայկ, Բել) ավելի խորը բացահայտման համար: Գրական-գեղարվեստական հնարանք է սա, որը հանդիպում ենք գերազանցապես կլասիցիստական բնույթի ստեղծագործություններում:

Կլասիցիստական բնույթի ստեղծագործություն լինելով է պայմանավորված նաև մեկ այլ հանգամանք՝ կերպարների աստվածացումը: Որոշակիորեն հետևելով Հոմերոսին, Բագրատունին էլ իր հերոսներին պատկերում է որպես մարդ-աստվածներ, ովքեր որևէ քայլ ձեռնարկելիս խորհրդակցում են աստվածների հետ, լսում նրանց կարծիքը, ղեկավարվում նրանց ցուցմունքներով ու խորհուրդներով և այլն: Բանը հաճախ հասնում է այնտեղ, որ «Երկրային հերոսները» դառնում են բարձրագույն կամքի յուրատեսակ կամակատարներ միայն: Հայկին, օրինակ, օգնում են բոլոր բարի աստվածներն ու հրեշտակները, իսկ Բելի կողմն է դժոխքն իր սատանաներով ու դևերով: Ամեն մի հարմար առիթով սրանք խորհուրդներ են տալիս երկրային իրենց «ներկայացուցիչներին», Հայկի ու Բելի կողմնակիցների կռիվների ժամանակ կռիվներ են տեղի ունենում նաև երկնային ուժերի միջև, Բելի պարտությամբ կործանվում են ամբողջ դժոխքի սև ուժերը: Կերպարների աստվածացման այս հնարանքը, որ այնպես գեղեցիկ կերպով կիրառել է Բագրատունին, երկար ժամանակ շարունակեց տիրապետել մեր գրականության մեջ, և իր այլևայլ դրսևորումները գտավ Մխիթարյան ուրիշ հեղինակների մոտ ևս:

Շատ կարելի է խոսել «Հայկ Դիւցազն»-ի մասին, սակայն ասվածն էլ բավական է հասկանալու համար, թե ինչու Բագրատունու այս ստեղծագործությունն իր մեկ-երկու թերություններով հանդերձ (նկարագրության որոշ միապաղաղություն, սյուժեի կտրտվածություն, խրթին, դժվարամատչելի լեզու), պետք է դարագլուխ կազմեր հայ գրականության անդաստանում և անմահության դափնեպսակ բերեր հեղինակին: Բագրատունին դարձավ ճանաչված մեծություն, ժամանակակիցների և հետնորդների գրական ճաշակը կազմավորող անհատ, երիտասարդության բարի նախանձի առարկան: Հատկանշական օրինակներից՝ հիշատակենք Պեշիկթաշլյանի (այն ժամանակ դեռ երիտասարդ) «Վիրգիլ ի

Պառնասեայ առ Բագրատունին մեծ» բանաստեղծությունը, որը, միաժամանակ, գեղեցիկ կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի կարծիք գոյություն ուներ Բագրատունու շուրջը անցյալ դարի կեսերին։ Բանաստեղծության մեջ Պեշիկթաշլյանը հնարավոր էր համարում այսպիսի մի պատկեր. լատին դասականը, խանդավառված Բագրատունու դյուցազներգությամբ, նրա համար գահ է հաստատում Պառնասում, իր՝ այսինքն, Վիրգիլիոսի կողքին, որպես հավասարը հավասարի։ «Փառքիս կեսը խլեցիր», – ներշնչված ասում է նա Բագրատունուն։

Հարյուր տարի է մեզ բաժանում Արսեն Բագրատունուց։ Նրա գրական ժառանգության մեջ շատ բաներ կան, որոնք այսօր սոսկ պատմական արժեք ունեն մեզ համար, գործեր էլ կան, որոնք ընդմիշտ մոռացության են դատապարտված։ Սակայն իր ստեղծագործությունների մի ընտիր մասով, հայագիտական-բանասիրական արժեքավոր աշխատություններով, Բագրատունին մնում է որպես մեր մշակույթի խոշորագույն գործիչներից մեկը, որպես հայ կլասիցիստական գրականության բարձրակետը։

Գրական թերթ, 1966, № 51, դեկտեմբերի 16

Սովետական Հայաստան (արտատպված Գրական թերթից)

1966, № 12, էջ 28

Սովետական գրականություն (արտատպված Գրական թերթից),

1966, № 12, դեկտեմբեր